*ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ, թուրք.՝ *Milli İstihbarat Teşkilatı*) կառուցվածքային ու գործառութային բարեփոխումները հիմնարար բնույթ ստացան հատկապես «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության տարիներին: ԱԶԿ-ի ուշադրությունը ԱՀԿ-ի բարեփոխումների հարցում պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ Թուրքիայի ԵՄ անդամակցության շրջանակում ստանձնած պարտավորություններով պետք է բարեփոխումներ իրականացվեին անվտանգության ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ու թափանցիկության հաստատման ուղղությամբ: Բացի այդ, կառավարող ԱԶԿ-ն իշխանության գալուց հետո բավական բարդ հարաբերությունների մեջ էր բարձրագույն զինվորականության հետ, ուստի ԱՀԿ-ին կառավարության լիարժեք վերահսկողության տակ վերցնելն ու պահելն «օրակարգային խնդիր» էր: ԱԶԿ-ի և հատկապես վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի համար խիստ անհրաժեշտ էր կառավարությանը ԱՀԿ-ի լիարժեք «հավատարմության» հաստատումը՝ որպես զինվորական իշխանությունների ու գլխավոր շտաբին հակակշիռ ներքին քաղաքական գործընթացներում: Բանակ-քաղաքացիական իշխանություն դիմակայության պարագայում ԱՀԿ-ի խնդիրն առաջնահերթ կարևորություն ստացավ Էրդողանի կառավարության համար: Բարեփո-

խումների համատեքստում առաջնային նշանակություն ունեցան նաև ԱՁԿ-ի արտաքին քաղաքականության վերաձևումները և արտաքին հետախուզության կազմակերպման ու գործառնական վերանայումներն ու հստակեցումները՝ որպես արտաքին քաղաքականության սպասարկման կարևորագույն մեխանիզմ:

ԱՀԿ-ի գործունեության ու նաև կազմակերպչական-կառուցվածքային ոլորտում լայնամասշտաբ բարեփոխումների անհրաժեշտությունը բարձրացվեց դեռ Էմրե Թաների ղեկավարման տարիներին (2005–2010 թթ. ): 2006 թ. նրա իսկ կողմից ԱՀԿ-ի բարեփոխումների աշխատանքներ էին նախաձեռնվել, որոնց նպատակն էր վերակազմակերպել ԱՀԿ-ի գործունեությունը ժամանակակից մարտահրավերներին ու զարգացումներին համարժեք: ԱՀԿ-ի ղեկավար Է. Թաների պաշտոնավարման սկզբում նրա կողմից առաջ քաշվեց ազգային անվտանգության ապահովման ու ազգային շահերի պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հետախուզության գործառույթների վերաձևման ու զարգացման անհրաժեշտության հարցը: 2007 թ. Է. Թաների կողմից գրավոր հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուրքիան իր թե՛ ռազմավարական և թե՛ աշխարհաքաղաքական կարևորության պատճառով երբեք չի կարող զարգացումների դիտորդի դերում լինել, և Թուրքիայի նման երկրին չի կարող բավարարել «պաշտպանական և սպասողական կեցվածքը»: Ուստի ԱՀԿ-ն 21-րդ դարում պետք է երկրի շահերին ու անվտանգության խնդիրներին համարժեք գործունեություն ծավալի[1]:

Նույն թվականի նոյեմբերին ԱՀԿ-ի բարեփոխումների անհրաժեշտության ու հետախուզական տեղեկատվության հավաքման ոլորտում ինքնուրույնության աստիճանը բարձրացնելու մասին էր խոսել 1992–1997 թթ. ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Սյոնմեզ Քյոքսալը՝ գտնելով, որ պետք է կառուցվածքային ու գործնական փոփոխություններ իրականացվեն արդի իրավիճակին ու զարգացումներին համարժեք պատասխանելու համար[2]:

2008 թ. դեկտեմբերին ԱՀԿ-ի նախկին փոխտնօրեն Էրթուղրուլ Գյունեյը «Sunday's Zaman» պարբերականին տված հարցազրույցում բարձրացրեց Թուրքիայի հետախուզական համակարգի արդիականացման խնդիրը՝ նշելով, որ հետախուզական մեխանիզմների ոլորտում բացթողումներ ու թերություններ կան,

[1] MIT'ten carpıcı mesajlar, http://www.hurriyet.com.tr/gundem/5727063_p.asp, 05.01.2007.

[2] Türk istihbarat yapısına eleştiri, 22.11.2007, http://www.haber7.com/yorumlar.php?id=281986

քանի որ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները խանդով են վերաբերվում միմյանց, և տեղեկատվության փոխանակում չի լինում: Անհրաժեշտ է, որ կառավարությունը համակարգի հետախուզական մարմինների գործունեությունն ու ստեղծի համակարգող մարմին[3]: Է. Գյունեյը անհրաժեշտ էր համարել նաև տարանջատել ներքին ու արտաքին հետախուզական գործունեությունը և ԱՀԿ-ին լիազորել միայն արտաքին հետախուզություն իրականացնելու գործունեությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով կովկասյան, բալկանյան ու մերձավորարևելյան տարածաշրջաններում:

2009 թ. արդեն Թուրքիայում աշխատանքներ էին տարվում հետախուզական մարմինների գործունեության առաջնահերթություններում փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ, ինչը կապված է միջազգային ժամանակակից իրադրությանն ու աշխարհաքաղաքական զարգացումներին համարժեք արձագանքելու և Թուրքիայի քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու անհրաժեշտության հետ: Նախ Թուրքիայում ռազմավարական նոր փոփոխություններ իրականացվեցին ներքին անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի ծառայությունների արդյունավետ գործողությունների համար, վերանայվեց ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությունը, և ստեղծվեց հատուկ համակարգող մարմին նշված ոլորտում: Հետախուզական գործունեության նոր ռազմավարության շրջանակներում ԱՀԿ-ն իր գործունեության «ծանրությունը» կենտրոնացնելու է արտաքին հետախուզության ոլորտում: Ազգային հետախուզական կազմակերպության կառուցվածքում իրականացված փոփոխությունների շրջանակում վերանայվել և հստակեցվել են նոր առաջնահերթությունները, որոնք վերաբերում են առավելապես արտաքին հետախուզությանը: Տարածաշրջանային, տնտեսական, քաղաքական, մշակութային ու ժողովրդագրական առումներով «առաջնահերթ թիրախներ» են ընտրվել Կովկասը, Բալկանները, Մերձավոր Արևելքը, Միջերկրական, Սև, Էգեյան ծովերը, Կասպյան ավազանը, Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, Աֆրիկան: Բացի անգլերենից, կարևորություն է տրվելու արաբերենին, հայերենին, վրացերենին, հունարենին, բուլղարերենին, սերբերենին, ռու-

---

[3] Lale Sariibrahimoğlu, Turkey needs an intelligence coordination mechanism, says Güven, 07.12.2008, Today's Zaman, http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&link=160856.

սերենին ու չինարենին[4]: ԱՀԿ-ի կողմից առաջնահերթություն ստացած 10 «ռազմավարական ոլորտներն» են.

1. Կովկաս. տարածաշրջանում Ռուսաստանի նոր ռազմավարությունները, Վրաստանի ձգտումները դեպի ՆԱՏՕ, Թուրքիա–Հայաստան–Ադրբեջան հարաբերությունները, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

2. Մերձավոր Արևելք. Իրաքում և Լիբանանում կատարվող զարգացումները, Իսրայելա–պաղեստինյան հարցը, Իրանի հաստատակամությունը՝ միջուկային հարցի հետ կապված, տարածաշրջանի հարցերում Սիրիայի դիրքորոշումը, արաբական մի շարք էմիրություններում հնարավոր քաղաքական զարգացումներն ու իշխանափոխությունները:

3. Բալկաններ. նախկին Հարավսլավիայի մաս կազմող երկրների միջև հարաբերություններն ու լարվածությունը, Կոսովոյի անկախությունից հետո զարգացումները, Եվրամիությանը Սերբիայի և Խորվաթիայի անդամակցությունը, ԵՄ-ին Մակեդոնիայի և Ալբանիայի ինտեգրմանն ուղղված ծրագրերը և ներդրումները, տարածաշրջանի երկրներում Հունաստանի ֆինանսատնտեսական ու հեռահաղորդակցության ոլորտում ներդրումները:

4. Սևծովյան տարածաշրջան. ավազանի արևելյան հատվածում նավթի պաշարներն ու որոնողական աշխատանքները, էներգետիկ ենթակառուցվածքները, ավազանի երկրների կողմից Սև ծովում ազդեցություն սահմանելու ձգտումները:

5. Միջերկրական ծով. Կիպրոսի հիմնախնդիրը, էներգետիկ պաշարները, Եգիպտոսի ու Կիպրոսի հանրապետության կողմից նավթագազային որոնողական աշխատանքներն ու պայմանագրերը, Բաքու–Թբիլիսի–Ջեյհան ու Սամսուն–Ջեյհան խողովակաշարերը:

6. Էգեյան ծով. թուրք–հունական օդային հաղորդակցության տեղեկատվական գիծը և ցամաքային հատվածի խնդիրները:

7. Աֆրիկա. զինված հակամարտությունները, Թուրքիայի աֆրիկյան ռազմավարական նախաձեռնությունը, Հյուսիսային Աֆրիկայում թուրքական ներդրումներն ու կապալառուական ծրագրերը:

8. Կարմիր ծով, Ադենի ծոց. ռազմավարական ուղիների վերահսկողություն, նավթի ու գազի փոխադրումների անվտանգության ապահովում և թուրքական ռազմական նավի ներկայության ապահովում:

---

[4] Dış istihbarata ağırlık verilecek, Sabah, 20.03.2009.

9. Միջին Ասիա և Կասպյան ավազան. նավթի ու գազի բաժանումը, բաշխումը, հնարավոր խողովակաշարերի կառուցումն ու ուղիները:

10. Հեռավորարևելյան, Ասիական–խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ ԱՄՆ–ի ու ԵՄ–ի տնտեսական մրցակցության ուժեղացումը, Չինաստանի ու Ճապոնիայի միջև մրցակցությունը տարածաշրջանային դերակատարության համար, Աֆղանստանում իրավիճակն ու ահաբեկչական գործողությունները: Տարածաշրջանի երկրների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը, Ռուսաստանի ու Չինաստանի միջև էներգետիկ պայմանագրերը, Կասպյան ավազանում նավթի ու գազի պաշարների արդյունահանումն ու ռազմավարական ծրագրերը:

Հարկ է նշել, որ սառը պատերազմի ողջ ժամանակահատվածում թուրքական հատուկ ծառայությունների գործունեությունն ու առաջնահերթությունը պայմանավորված էին հիմնականում ԱՄՆ և ՆԱՏՕ–ի գերակայություններով, և սպառնալիքների ու գործունեության դաշտի հիմնական ուղեգծերը սահմանվում էին մեկ կենտրոնից: Ինչպես արևմտյան առանցքի շատ երկրներում, այնպես էլ Թուրքիայում հետախուզական մարմինների գործունեությունը մեծ մասամբ սահմանափակված էր ԽՍՀՄ–ի, սոցիալիստական ճամբարի երկրների ու կոմունիզմի դեմ պայքարի գերակայություններով: Ինչպես իր դոկտորական ատենախոսության մեջ իրավացիորեն նշել է ԱՀԿ–ի ներկայիս ղեկավար Հ. Ֆիդանը, սառը պատերազմի շրջանում Թուրքիայում հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր երկրի ներքին զարգացումների վրա, մինչդեռ այդ պատճառով արտաքին հետախուզական տեղեկատվության ստացման կարիքը չէր զգացվում, և այն կախված էր մնում ՆԱՏՕ–ի դաշնակիցների կողմից ստացվող հետախուզությունից[5]:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի համար առաջնահերթ դարձավ անվտանգության նոր միջավայրի, նոր արտաքին քաղաքական հրամայականների ու մարտահրավերների վերաիմաստավորմամբ նաև հետախուզական գործունեության գերակայությունների «արդիականացումը»:

ԱՀԿ–ի արտաքին հետախուզական գործառույթների ընդլայնման անհրաժեշտությունը պայմանավորված է Թուրքիայի

[5] MİT'i nasıl yöneteceğini yıllar önce yazdı, http://www.haber7.com/ic–politika/haber/980454–miti–nasil–yonetecegini–yillar–once–yazdi

հավակնոտ արտաքին քաղաքականությամբ ու հատկապես իր հարևան տարածաշրջաններում ազդեցության հաստատման ու մեծացման ջանքերով: Բացի այդ, Թուրքիան ցանկանում է նվազագույնի հասցնել արտաքին հետախուզության ոլորտում այլ երկրներից ունեցած կախվածությունը և նրանց ազդեցությունը: Նման անհրաժեշտությունն առաջացավ հատկապես թուրք–իսրայելական լարված հարաբերություններից հետո, քանի որ հետախուզական ոլորտում այդ երկրների համագործակցությունը բավական սերտ էր, և Թուրքիան զգալի կախվածություն ուներ հատկապես քրդական հիմնախնդրի վերաբերյալ «Մոսադի» կողմից տեղեկատվության տրամադրումից: ԱԶԿ–ի իշխանության տարիներին թուրք–ամերիկյան հարաբերություններում սկսված անվստահությունն ու տարածաշրջանային զարգացումներում հաճախ դրսևորվող շահերի բախումները նվազագույնի հասցրին ամերիկյան ու թուրքական հատուկ ծառայությունների համագործակցությունը: Բազմակի անգամ Թուրքիան տարբեր մակարդակներով հայտարարել է, որ ԱՄՆ–ն Քուրդիստանի բանվորական կուսակցության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրում Թուրքիային: 2006 թ. ԱՀԿ–ի կողմից Իրաքում զարգացումների ու ՔԲԿ–ի վերաբերյալ պատրաստված զեկույցում նշվում էր, որ ԱՄՆ–ը և Իրաքը բավարար քայլեր չեն ձեռնարկում ՔԲԿ–ի դեմ Թուրքիայի հակաահաբեկչական պայքարում[6]: Այս համատեքստում բավական բնութագրիչ էր Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի՝ 2011 թ. սեպտեմբերին «CNN Türk» հեռուստաալիքին տված հարցազրույցը, որտեղ նա բարձր էր գնահատել ԱՀԿ–ում իրականացվող բարեփոխումներն ու ռազմավարական հետախուզության աշխարհագրական ու գործնական ոլորտների ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքները: «Թուրքիան գտնվում է դինամիկ զարգացող միջավայրում, և տարածաշրջանում փոփոխություններ են տեղի ունենում: Ինչո՞ւ պետք է Թուրքիան նման հարցերում կախված լինի այլ երկրների հետախուզական ծառայություններից, եթե ԱՀԿ–ն ավելի լավ կարող է գործել: Թուրքական հետախուզությունը պետք է ի վիճակի լինի իր ձեռքը պահելու զարկերակի վրա աշխարհի յուրաքանչյուր անկյունում»[7]: Հարկ է նշել, որ ոլորտի նախկին բարձրաստիճան պաշտոնյաներն ու

[6] Hakan Dilek, MİT'in Tarihi, 04–12 Agustos, Takvim, s. 10, http://i.onbesyirmibes.org/pdf/20101126_mitin_tarihi.pdf

[7] Serkan Demirtaş, Ankara restructuring intelligence service, Hürriyet Daily News, 18.09.2011.

փորձագետները հաճախ էին քննադատաբար մոտենում ԱՀԿ-ի գործունեությանն ու այլ երկրներից ունեցած կախվածությանը: Մասնավորապես ԱՀԿ-ի նախկին ղեկավար Ս. Քյոքսալը 2007 թ. քննադատության ենթարկեց այդ կառույցին՝ նշելով, որ այն չի կարողանում ապահովել իր համար անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը հատկապես իր շրջակայքում քրդական անջատողականների ու նրանց առաջնորդների վերաբերյալ և ստիպված է դրանք ստանալ ԱՄՆ-ից: Սխալ քայլերից խուսափելու համար ռազմավարական հետախուզության ոլորտում Թուրքիան չպետք է կախում ունենա այլ երկրներից[8]: 2012 թ. հուլիսին Թուրքիայի «TÜRKSAM» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, դոկտոր Ջելալեթթին Յավուզը, խոսելով թուրք-իսրայելական հարաբերությունների մասին, անդրադարձել էր նախկինում թուրքական հետախուզական մարմիններին իսրայելական հատուկ ծառայությունների կողմից ցուցաբերած օգնությանը՝ նշելով, որ «նախկինում ՔԲԿ-ի դեմ պայքարում Իսրայելի «Մոսադ» գաղտնի ծառայությունը կարևոր հետախուզական օգնություն է ցուցաբերել Թուրքիային: «*Միայն այդ ոլորտում է Թուրքիան դեռ զգում Իսրայելի կարիքը*»[9]: Հարկ է նշել, որ հատկապես վերջին տարիներին ՔԲԿ-ի դեմ պայքարի հարցերում Թուրքիայի անվտանգության համակարգում հաճախակի էր բարձրաձայնվում հետախուզական մարմինների բացթողումների ու թերությունների վերաբերյալ: Թուրքական հատուկ ծառայությունները, հատկապես ՔԲԿ-ի և ընդհանրապես քրդական զինյալների դեմ պայքարի հարցում 1990-ական թթ. ակտիվ համագործակցության մեջ էին իսրայելական կողմի հետ[10] և զգալի կախում ունեին հետախուզական տվյալների փոխանցման առումով: Թուրք վերլուծաբանի վերոնշյալ պնդումը վկայում է, որ մինչ

---

[8] Türk istihbarat yapısına eleştiri, 22.11.2007, http://www.haber7.com/yorumlar.php?id=281986

[9] Տես Ջ. Յավուզի հարցազրույցը Առաջին լրատվականին՝ http://1in.am/arm/armenia_interview_97186.html?from=interview

[10] Թուրք-իսրայելական անվտանգության մարմինների, հատուկ ծառայությունների համագործակցության մասին տես Nezih Tavlaş, Türk–Israil Güvenlik ve Istihbarat Ilişkileri, Avrasya Dosyası Israil Özel Sayısı, cilt 1, sayı 3, Sonbahar 1994: Թուրքական և իսրայելական հատուկ ծառայությունների միջև համագործակցության հիմքերը դրվել են դեռևս 1958 թ. Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի և արտաքին գործերի նախարար Գ. Մեյերի՝ Անկարա կատարած գաղտնի այցելության արդյունքում: Թուրքիան իր հետախուզական հնարավորությունները մեծացնելու և զարգացնելու համար ակտիվ կապերի մեջ էր Իսրայելի, ԱՄՆ-ի և Իրանի հետախուզական մարմինների հետ: Տես Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 237-238:

օրս էլ թուրքական հատուկ ծառայությունները ինքնուրույնաբար չեն կարողանում ապահովել անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը ՔԲԿ-ի վերաբերյալ: Եվ իրականում իսրայելական հատուկ ծառայությունները ավելի լավ են տիրապետում տարածաշրջանում և հատկապես Հյուսիսային Իրաքում քրդական շրջանների ու դրանցում զարգացումների վերաբերյալ հետախուզական տեղեկատվությանը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններին ու զարգացումներին համապատասխան Թուրքիան քայլեր էր ձեռնարկում ավելի ընդլայնելու արտաքին հետախուզության աշխարհագրությունն ու բնագավառները: Բավական լուրջ ուշադրություն է դարձված էներգետիկ-կոմունիկացիոն խնդիրներին, որով Թուրքիան պատրաստվում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել տարածաշրջանային ու արտատարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային ու քաղաքական-տնտեսական գործընթացներում: Դա հնարավորություն կտա ապահովելու ոչ միայն սեփական անվտանգությունը, այլ նաև մեծացնելու իր դերակատարությունը տարածաշրջանային ու միջազգային գործընթացներում[11]:

2010 թ. մայիսին ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակվեց վարչապետ Էրդողանի մտերիմը համարվող Հաքան Ֆիդանը, որը մինչ այդ կարճ ժամանակ զբաղեցնում էր ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնը[12]: Ֆիդանի պարագայում կարևոր է նաև այն, որ նա 2003-2007 թթ. զբաղեցրել է վարչապետի աշխատակազմի «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալության» (*Türk İşbirliği ve Kalkinma İdaresi Başkanliği, TIKA*) ղեկավարի պաշտոնը, որի գործունեության հիմնական շրջանակն ու ուղղությունը վերաբերում են եվրասիական տարածաշրջանում թյուրքալեզու երկրներին ու ժողովուրդներին կրթական-մշակութային օգնությանը, սոցիալ-տնտեսական, հումանիտար ծրագրերի իրականացմանը[13]: Թուրք մասնագետների

---

[11] Լ. Հովսեփյան, Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, «Դրօշակ», No. 11 (1626), նոյեմբեր, 2010, էջ 31:

[12] Տես ԱՀԿ-ի պաշտոնական կայք, http://www.mit.gov.tr/mustesar.html, 25.08.2010; Sedat Ergin, A sensitive appointment to the top of the MİT, Hürriyet Daily News, 27.04.2010:

[13] TIKA-ն ստեղծվել է 1992 թ. կառավարության որոշման համաձայն՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ թյուրքալեզու երկրներին տարբեր օգնության ծրագրերի համակարգման ու իրականացման նպատակով: Այն սկզբնական շրջանում գործում էր որպես ԱԳՆ-ին կից կազմակերպություն, իսկ հետագայում միացվեց վարչապետի գրասենյակին: Տես TIKA-ի պաշտոնական կայքը՝ http://www.tika.gov.tr/tika-hakkinda/tarihce/1:

բնորոշմամբ TIKA-ն հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում հիմնականում Եվրասիայի մի շարք տարածաշրջաններում ու երկրներում ստացավ «Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործիքի դերը»[14]:

Հ. Ֆիդանի նշանակումը որոշ թուրքական լրատվամիջոցներ որակեցին որպես վարչապետ Էրդողանի կողմից ԱՀԿ-ի նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատմանն ուղղված քայլ, քանի որ նա համարվում էր իր իսկ վստահելի մարդկանցից: Պաշտոնն ստանձնելուց հետո նա հայտարարեց, որ ԱՀԿ-ն հետագայում լինելու է ավելի բաց հասարակության առջև և չի լինելու քաղաքականացված, չի ծառայելու անհատներին կամ առանձին խմբերի շահերին[15]:

ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում Հ. Ֆիդանի մեկամյա գործունեության շրջանում արդեն մի շարք քեմալիստական ու ձախ ուղղվածության լրատվամիջոցներ շրջանառեցին «Intelligence online» պարբերականի հրապարակումը, ըստ որի՝ այդ գերատեսչությունում իրագործվել է «մաքրման» գործողություն, որի նպատակը երկար ժամանակ «հակաիսլամական ամրոց» հանդիսացող այդ կառույցը Էրդողանի կառավարության լիակատար վերահսկողության տակ դնելն է: «Բանակի ազդեցության սահմանափակման նկատմամբ իրականացրած հաջող գործողություններից հետո Էրդողանն այժմ ցանկանում է վերահսկողություն հաստատել ԱՀԿ-ի վրա և դա հանձնարարել է վերջինիս ղեկավար Հ. Ֆիդանին»[16]:

Դեռևս 2003 թ. ընթացքում Թուրքիայի կառավարությունը նախաձեռնել էր ԱՀԿ-ի օրենքում փոփոխությունների միջոցով բարեփոխումներ իրականացնել կառույցում: Ըստ այդ նախաձեռնության՝ ԱՀԿ-ն բաժանվելու էր և կազմվելու էր 2 առանձին միավորներից՝համապատասխանաբար ներքին ու արտաքին հետախուզության ոլորտում, որոնց գլխավորելու էին առանձին նշանակված ղեկավարները[17]: Բարեփոխումների հիմնական մոդել էին ընտրվելու ԱՄՆ-ում հետախուզական ծառայությունների կառուցվածքն ու գործունեությունը, որտեղ հստակ առանձ-

---

14 Tuncay Kardaş, Ramazan Erdağ, Bir Dış Politika Aracı Olarak TİKA, Akademik Incelemeler Dergisi, Vol. 7, Sayı:1, 2012, s. 169.

15 Turkey's intelligence agency to change image with appointment of new chief, Hürriyet Daily News, 28.05.2010.

16 "MİT'te temizlik operasyonu" iddiası, http://haber.sol.org.tr/devlet–ve–siyaset/mitte–temizlik–operasyonu–iddiasi–haberi–40710, 25.03.2011.

17 MİT`in yapısı değişiyor, Yeni Şafak, 30.11.2003, http://yenisafak.com.tr/arsiv/2003/kasim/30/p01.html«

նացված են ներքին ու արտաքին հետախուզական մարմինները՝ Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ) և Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՀՎ): ԱՀԿ-ի բարեփոխումների խնդիրը երկար ժամանակ եղել է մասնագիտական ու վերլուծական քննարկումների առարկա, որի ժամանակ անխուսափելի էր համարվում թուրքական հետախուզության՝ ժամանակակից իրողությունների համապատասխան արդիականացնելու հրամայականը:

ԱՀԿ-ում կառուցվածքային ու գործառութային բարեփոխումներն արդեն իսկ իրողություն դարձան Հ. Ֆիդանի պաշտոնավարման սկզբնական շրջանում: 2010 թ. նոյեմբերին թուրքական ԶԼՄ-ները տեղեկացրին, որ կառավարության գաղտնի որոշմամբ ԱՀԿ-ում կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել: Հատկապես առանձնացվել են ԱՀԿ-ում ներքին հետախուզության ու արտաքին հետախուզության ոլորտները՝ կազմելով համապատասխանաբար Առաջին և Երկրորդ հետախուզությունները[18]: Կազմակերպությունում հետախուզության համար պատասխանատու տեղակալների թիվն ավելացվել է, և հետախուզության ոլորտը համակարգելու են պետի երկու տեղակալները: Կատարված կառուցվածքային փոփոխություններով ԱՀԿ-ի ղեկավարը նախկին երեքի փոխարեն ունենալու է չորս տեղակալ: Ներքին հետախուզության հարցերով պատասխանատու տեղակալը համակարգելու է Անվտանգության հետախուզության վարչությունը (*Güvenlik İstihbarat Başkanliği*) և Հակահետախուզության վարչությունը (*İstihbarata Karşi Koyma Başkanliği*), իսկ արտաքին հետախուզության հարցերի պատասխանատու տեղակալը՝ Ռազմավարական հետախուզության վարչությունը (*Stratejik İstihbarat Başkanliği*) և Բաց աղբյուրների վարչությունը (*Açik Kaynaklar Daire Başkanliği*)[19]:

Իրականացված կառուցվածքային այդ բարեփոխումների շրջանակում 2011 թ. ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվեց կադրային դիվանագետ, Ճապոնիայում Թուրքիայի դեսպան Աբդուռահման Բիլգիչը, որը պետք է ապահովեր ԱՀԿ-ի ու Արտաքին գործերի նախարարության միջև համագործակցությունը արտաքին հետախուզության ոլորտում[20]:

---

[18] MİT ikiye bölündü!, Vatan, 12.11.2010, http://haber.gazetevatan.com/mit–ikiye–bolundu/340367/1/Haber

[19] MIT Faaliyet Raporu 2010, s. 3, http://www.mit.gov.tr/faaliyet_raporlari/faaliyet_raporu2010.pdf

[20] Diplomat appointed to Turkey's intel body, Hürriyet Daily News, 07.10.2011.

2008 թ. սկզբից արդեն աշխատանքներ էին տարվում ԱՀԿ-ի ներսում ուսումնակրթական մասնագիտական բազայի զարգացման ուղղությամբ, որի շրջանակներում նախատեսված էր ստեղծել հատուկ ակադեմիա անձնակազմի վերապատրաստման համար: Զուտ պրոֆեսիոնալ ուսումնական ծրագրերից բացի, անձնակազմի համար կազմակերպվելու էին օտար լեզուների դասընթացներ[21]: Ըստ թուրքական ԶԼՄ-ների՝ 2009 թ. ԱՀԿ-ն աշխատանքի է ընդունել նոր աշխատակիցներ՝ հայերենի, վրացերենի, արաբերենի, սերբերենի, եբրայերենի, հունարենի, ռուսերենի իմացությամբ, որոշ գործող աշխատակիցներ էլ տվյալ լեզուներով համապատասխան ուսուցում են անցել[22]: Հարկ է նշել, որ բարեփոխումների համատեքստում առաջնային պլան է մղված հետախուզական-վերլուծական գործունեության մեջ գիտական-ակադեմիական ոլորտի ներգրավվածության ու համակարգման ապահովման խնդիրը: Գիտահետազոտական ոլորտում աշխատանքներն ակտիվացնելու նպատակով 2011 թ. ԱՀԿ-ի ուսումնական կենտրոնի (*Milli Istihbarat Teşkilati Eğitim Merkezi*) կազմում ստեղծվեց *Հետախուզական ուսումնասիրությունների կենտրոն* (*Istihbarat araştirmalar merkezi, ISAMER*) անունը կրող ակադեմիան, որի նպատակը ակադեմիական ուսումնասիրություններն են հետախուզության ոլորտում և անհրաժեշտ նորարարական առաջարկների պատրաստումը[23]: 2012 թ. հունիսին այն անցկացրեց իր առաջին համաժողովը՝ ակադեմիական ու անվտանգության ոլորտի մասնագետների ու պաշտոնյաների մասնակցությամբ, որի նպատակն էր վերհանել հետախուզական գործունեության մեջ վերլուծական բաղադրիչի, որոշումների կայացման գործում ռազմավարական վերլուծության դերի ու նշանակության տեսական գործոնները[24]: Ի դեպ՝ այդ համաժողովին մասնակցել է նաև թուրքական «Մերձավոր Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն»-ի տնօրեն Հ. Քանբոլաթը[25]: Ակնհայտ է, որ արդեն իսկ ԱՀԿ-ի կողմից ուշադրություն է դարձվում երկրում գործող ռազմավարական հետազոտությունների ոլորտում գործող շրջանակներին: Վերջին տարի-

[21] MİT Akademisi kuruluyor, Akşam, 03.03.2008.
[22] MİT ikiye bölündü, NTV, 12.11.2010, http://www.ntvmsnbc.com/id/25150946/#storyContinued.
[23] Տես ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ http://www.mit.gov.tr/isamer.html; MİT, istihbarat akademisi kurdu, Sabah, 19.08.2011:
[24] Տես ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ http://www.mit.gov.tr/icinta.html:
[25] Tek istihbarata bağlı kalmamalı, Milliyet, 09.06.2012:

ներին Թուրքիայի ԱԳՆ-ի կողմից երկրի վերլուծական-հետազոտական կենտրոնների ու փորձագետների հետ ինտենսիվ համագործակցության հաստատման ու շփումների օրինակով ԱՀԿ-ն նույնպես աստիճանաբար սերտ համագործակցություն կհաստատի երկրի վերլուծական-ուղեղային կենտրոնների (*think-tank*) հետ՝ դրանց մասնագիտական-կադրային ներուժն օգտագործելով ռազմավարական հետախուզական-վերլուծական գործունեության մեջ:

Ամերիկյան մոդելի օրինակով վերակազմավորումների շրջանակում ԱՀԿ-ի տանիքի ներքո 2012 թ. ստեղծվեց Հետախուզության համակարգման կենտրոնը (İstihbarat Koordinasyon Merkezi), որի նպատակը հետախուզական ծառայությունների ու գերատեսչությունների միջև արդյունավետ համագործակցության ու հետախուզական տեղեկատվության համակարգման ապահովումն է: Այն, փաստորեն, դառնում է երկրի հետախուզական հանրույթի տեղեկատվության համակարգումն ապահովող մարմին: Կենտրոնը կազմված է ԳՇ-ի, Ժանդարմերիայի, Անվտանգության գլխավոր տնօրինության ու ԱՀԿ-ի կողմից հետախուզության համար պատասխանատու հինգական ներկայացուցիչներից: Գլխավոր շտաբի, ոստիկանության, ժանդարմերիայի և այլ գերատեսչություններից եկող հետախուզական տեղեկատվությունը հավաքվելու և գնահատվելու է այդ կենտրոնում: Փաստորեն, բոլոր մարմինների կողմից հետախուզական տեղեկատվության հավաքումն ու փոխանակումն իրականացվելու են ԱՀԿ-ի տանիքի ներքո[26]:

Ամփոփելով ԱՀԿ-ի բարեփոխումները և վերջին տարիներին հատկապես արտաքին հետախուզության ոլորտում ձեռնարկված արդիականացման քայլերը՝ կարելի է փաստել, որ դրանք ուղղված էին մի կողմից՝ այդ կազմակերպությունը լիովին դնելու քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ներքո, մյուս կողմից էլ՝ դրա կառուցվածքային ու գործառնական փոփոխություններով համապատասխանեցնելու Թուրքիայի արտաքին քաղաքականության հրամայականներին ու աշխարհաքաղաքական գործընթացներին: ԱՀԿ-ի համակարգում կատարվող բարեփոխումներին զուգահեռ Թուրքիայի կառավարության կողմից 2010 թ. իրականացվեցին

[26] Erdoğan'ın talimatıyla kurulan birimden nokta operasyon!, http://www.samanyoluhaber.com/gundem/Erdoganin-talimatiyla-kurulan-birimden-nokta-operasyon/922694/; İstihbarat birleşti yeni patron MİT, http://www.timeturk.com/tr/2012/12/22/istihbarat-birlesti-yeni-patron-mit.html

նաև որոշ բարեփոխումներ արտաքին գործերի նախարարությունում հատկապես կառուցվածքային առումով[27]: Թուրքիայի գործող կառավարության նախաձեռնությամբ հատկապես հետախուզական մարմինների ու ԱԳՆ-ի համակարգում իրականացվող կառուցվածքային-կադրային փոփոխությունները միտված են նաև կարծրատիպային թե՛ գործառնական, թե՛ աշխարհայացքային հին մոտեցումներից ձերբազատվելու, նոր «հրամայականների» ու «առաքելությունների» համար կարող ու գաղափարապես պատրաստված մասնագիտական-կադրային ներուժի մոբիլիզացմանը:

[27] Damla Aras, Turkey's Ambassadors vs. Erdoğan, Middle East Quarterly, Winter 2011, p. 49.